

Ա. Մարգարյան

Խ ԱՐՈՎՅԱՆԻ ԼԵԶՎԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅՍՑՔՆԵՐԸ

Անցյալ դարի 30—40-ական թվականներին՝ հայ հասարակական կյանքի նոր պայմաններում, երբ արդեն որոշ նախադրյալներ են ստեղծվում ֆեոդալական-ափառական ծանր կապանքների խորտակման և դրան հակառակ բուրժուական հարաբերությունների զարգացման ուղղությամբ, լեզվի հարցը սկսում է ստանալ առաջնահերթ նշանակություն։ Եթե երկար ժամանակ ժողովրդի կենդանի-խոսակցական լեզուն զրկված էր գործածության լայն ֆունկցիաներից, ապա չունեի գրականություն մեջ, գրագրության ու մամուլի լեզուն չէր, ապա 19-րդ դարի 30-ական թվականներից սկսած՝ կատարված տեղաշարժերն ու նրանց զարգացումը անխուսափելիորեն առաջադրում են ժողովրդին հասկանալի ու մշակված գրական լեզու և հենց դրանով գրականություն, մամուլ ունենալու պահանջը։

Հայ հասարակական կյանքի այդ ժամանակվա վիճակով պայմանավորված այդ պահանջը, սակայն, դեռևս խանգարում էր մեջ էր, և հետևաբար շատ ավելի նկատելի դառնալու համար պետք է աճեր ու հասունանար։ Ընայն դա. իհարկե, հարցի մի կողմն էր, նա միաժամանակ պետք է ծներ և իր պաշտպաններին ու իր նշանակությունը գիտակցողներին։ Հին լեզուն ասպարեզից դուրս մղելու և գրականություն մեջ կենդանի-խոսակցական լեզվի՝ աշխարհաբարի տիրապետությունը հաստատելու համար պետք է որ ծնունդ առներ ուժեղ պայքար, իսկ հնի դեմ և նորի օգտին պայքարողներն էլ պետք է որ ծանոթ լինեին ուրիշ ժողովուրդների լեզվի պատմությանը, նրանց կյանքի ու կուլտուրայի զարգացմանը, պետք է որ հաշվի առնեին առաջադեմ ժողովուրդների լեզվի փորձը և որոշակի հայեցակետից կովի ելնեին, մերժեին հինը ու պաշտպանեին նորը, դրա իրավունքն ու դատը։

Այդ գործում իրրեւ առաջամարտիկ հանդես եկավ Խ. Արուսյանը։ Հայկական խավար միջավայրից հեռանալով ու ընկնելով Դորոխատ, իր ուսումնառության ողջ ժամանակամիջոցում (1830—1835) նա քաջ գիտակցում է կուլտուրապես առաջ գնացած ազգերի ու հայ ժողովրդի կյանքի միջև եղած հսկա տարրերությունը. եթե մի շարք ժողովուրդներ ունեն կենդանի լեզվով գիր ու գրականություն, նրանց պարոցներում ուսուցումը տարվում է բոլորին հասկանալի մայրենի լեզվով, նրանք հրատարակում են գրքեր ու պարբերականներ, ապա հայ ժողովրդի կենդանի լեզուն, ընդհակառակը, տեղ չունի գրականություն մեջ, հրապարակում իշխում է միայն մեռած, իր դարը վաղուց ապրած գրաբարը, և տգիտության մեջ գտանի ազդ մերձ և զայժմ անխօս մնայ ի միանձ։

¹ Խ. Արուսյան, ԵԼԺ, հատ. Թ, էջ 63։
Տեղեկագիր 12—5

Այս հիման վրա էլ, ինչպես «Բորպատյան օրագրություններն» են ցույց տալիս, Ս. Արուսյանը աստիճանաբար բմբուհում է հասարակական կյանքի զարգացման գործում լեզվի ունեցած հսկայական դերն ու նշանակությունը, նրա պիտանի լինելը «ի կեանս»¹, որով էլ հենց լեզվի հարցը դառնում է նրա գործունեության հիմնական ու կարևոր հարցերից մեկը. մի հարց, որի վերաբերյալ Արուսյանի հայացքները սկիզբ են առնում ու սաղմնավորվում գորպատյան շրջանում՝ Եվրոպայում ծնունդ առած պատմա-համեմատական լեզվաբանության անմիջական ազդեցության տակ։ Բրեն գիտելիքներ հաղորդող պրոֆեսորների ու այլ գիտնականների միջոցով Ս. Արուսյանը հաղորդակից է դառնում նույն այդ լեզվաբանության հիմնականներին, ծանոթանում մի շարք լեզուների կրած փոփոխությունների պատմությունը*, գիտակցում յուրաքանչյուր ժողովրդի լեզվի դերն ու նշանակությունը նրա կյանքում և խորապես համոզվում, որ «Լուրաքանչիւր ոք զիւր լեզու առաւելապէս պարտի ուսանիլ»²։

Ս. Արուսյանի՝ գորպատյան շրջանում սկիզբ առած լեզվագիտական հայացքները միանգամից չեն ձևավորվում ու ամբողջականանում, այլ, ընդհակառակը, գրականության մեջ ժողովրդի կենդանի լեզվի դիրքերը ամբարադեղու նպատակային ձգտումները ավելի են խորացնում ու ընդարձակում դրանք, որոնք այսօր էլ մեզ համար որոշակի հետաքրքրություն են ներկայացնում։

Արուսյանի լեզվագիտական տեսության մեջ հետաքրքիր ու ուշագրավ է, ամենից առաջ, հասարակական կյանքի զարգացման բնագավառում լեզվի խաղաղած դերի ու նշանակության հարցը. զարգացման հսկա ճանապարհանցած ազգերի ու հայ ժողովրդի կյանքի, կուլտուրայի, գրականության բաղդատման ֆոնի վրա, օրինակ, նա նկատում է հայ ժողովրդի կենդանի-խոսակցական լեզվի բարձրիկի, անպատիվ վիճակը և ըստ այդմ էլ արձանագրում, որ մինչև այն կյանքում չկատարի իր իսկական դերը, խեղճ ժողովուրդը պետք է խարխափի տգիտության, հոգեկան խավարի ստրկական կապանքներում. այդպիսով, Արուսյանը գիտակցում է լեզվի, իբրև հասարակական երևույթի, էությունը և այն իրավացիորեն գիտում իբրև հասարակական կյանքը առաջ մղելու, ժողովրդին խավարից դեպի լույսը տանելու, նրա կուլտուրական կյանքի մակարդակը բարձրացնելու, ժողովրդի համար հարազատ գրականություն ստեղծելու հիմնական միջոց։ Դրա փայլուն հաստատումն են թերևս այն գիտողությունները, թե Վանքախտ և ողորմելի է ոչ միայն ազգ մի, այլ նաև Լուրաքանչիւր ոք որ կիրառու-

¹ Ս. Արուսյան, ԵԼԺ, հատ. Ծ, էջ 36։

² Նույն տեղում, էջ 36։

* Դրա փայլուն ապացույցներից մեկը, օրինակ, Ս. Արուսյանի հետևյալ վկայությունն է. «Նա (Ռիդայի գիմնազիայի դասատուն՝ Նափիերսկին — Ա. Մ.) հարցանէ վասն գրականութեան և դպրութեան ազգի մերոյ ի պատմելն իմ ինչ ինչ, նա զարմանայ սեղեայ, բերէ ինձ դիրք մի տպեալ ի Վինս Վասն լեզուի զանազան տղգաց ընդ որս և մեր յայնչափ խնդամ կամեցեալ անդ ընթեռնուի, նա արդեւ է» (ԵԼԺ, հատ. Ծ, էջ 204)։ Թեև մեզ կոնկրետ հայտնի չէ, թե խոսքը որ դրքի մասին է, բայց միանգամայն պարզ ու հասկանալի է, որ այն վերաբերում է համեմատական լեզվաբանությանը, որով հրապուրված էր Արուսյանը։

թիւն նորա (լեզվի — Ա. Մ.) ոչ գիտէ՞¹, թե առանց լեզվի չէ ինչ զանազան մարդն յանբանից՞², ինչպէս լեզուի մարդն թշուառագոյն լինէր քան զամենայն կենդանիս³։

Նշելով լեզվի հասարակական այդ մեծ դերն ու նշանակութիւնը, Խ. Արուստյանը, որ կարեւոր է, լեզվի (տվյալ դեպքում՝ հայերենի) անցած ուղին կապում է այն կրող ժողովրդի պատմական կյանքի հետ և վերջինիս պայմաններով էլ հենց բացատրում նրա ծանր վիճակը, գործածութեան նեղ շրջանակները, անմշակվածութիւնը, դրականութեան մեջ տեղ չունենալը և այլն։

Իսկ սա, ինքնին, նշանակում է, որ Խ. Արուստյանը ժողովրդի ու նրա լեզվի պատմութիւնն առնում է սերտ կապի մեջ, լեզվի կատարելագործման հիմքերը տեսնում հասարակական կյանքի առաջնութեամբ։ Ինչպէս տնտեսապէս, կուլտուրապէս, գաղափարապէս զարգացած ժողովուրդների լեզուն ուղիղ համեմատական է նրանց կյանքի զարգացման ընդհանուր մակարդակին, այնպէս էլ զարգացման ցածր աստիճանի վրա գտնվող ժողովուրդները ունեն իրենց կյանքի համապատասխան լեզու։ «Լեզվի մեջ,— շեշտում է Արուստյանը,— ինչպէս մաքուր հայերու մեջ, ցոլանում է մի ազգի առանձնահատկութիւնը, նրա կուլտուրան, մինչև անգամ նրա քաղաքական վիճակը։ Ինչպէս առանձին անհատի մոտ տարիքի անման դեպքում, այնպէս էլ յուրաքանչյուր ժողովրդի մոտ նրա հոգեւոր զարգացման, անման կամ նվազման հետ միասին լեզուն էլ բոլորովին այլ կերպարանք է ստանում։ Ի՞նչ կարող է ժխտել, որ մեր ամբողջ հոգեկան զարգացումը, ինչպէս և մեր լեզուն գլխավորապէս կախված է այն պայմաններից, որոնք մեզ վրա քաղաքական ազդեցութիւն են ունեցել⁴։

Իսկ ինչ պայմաններ էին դրանք. հետադարձ հայացք նետելով հայ ժողովրդի կյանքի անցած մոռյալ ուղու վրա, Արուստյանը քանիցս նշում է, որ հայ ժողովուրդը, շատ վաղուց զրկվելով ինքնուրույն պետականութիւնից, չարունակ գտնվել է վայրագ ճնշողների ճնշաններում։ Թուրք, պարսիկ, արաբ, սելջուկ և այլ ասիական ցեղերի անխիղճ կերպով ծվատել, խռտանգել են հայ ժողովրդին, մեծ հարվածներ հասցրել նրա կուլտուրական կյանքի զարգացմանը և անվերջ ջանացել բնաջնջել նրան և կամ էլ ձուլել իրենց։

«Հայաստանի ճակատագիրը,— ասում է Արուստյանը,— հայտնի է ամեն մի կրթված մարդու։ Մոլի բռնապետական պետութիւնների ծանր լծի ճնշման տակ՝ Հայաստանի հայրենադուրկ զավակները վաղուց են հեռացել իրենց երկրից և անկասկածաբար վնասել համարյա բոլոր աշխարհամասերում։ ... Իսկ նրանց ինքնուրույնութիւնն ու լեզուն հազարամյակներ առաջ կորել են ամեն ինչ խորտակող ուժեղ հեղաշրջումների մեջ, որի նմանը հազիւ թե մի այլ աշխարհամասում եղել է⁵։

¹ Խ. Արուստյան, ԵԼԺ, հատ. 8, էջ 312։

² Նույն տեղում։

³ Տե՛ս Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանում պահվող «Նախաշավիղ»-ի՝ առաջին անգամ պրոֆ. Գ. Սևակի կողմից ի հայտ բերված օրինակի առաջաբանը։

⁴ Խ. Արուստյան, ԵԼԺ, հատ. 3, էջ 45։

⁵ Նույն տեղում, էջ 46։

Պարզ է. հայ ժողովրդի պատմական կյանքի հանգամանքներով պայմանավորված ինչպես ինքը՝ ժողովուրդը, այնպես էլ նրա լեզուն չեն ունեցել անկաշկանդ զարգացում. թե մեկը և թե մյուսը շարունակ ենթակա են եղել ասիմիլյացիայի վտանգին. հայ ժողովուրդը չի կարողացել ազատ կերպով ու կամեցածին պես առաջ մղել իր կուլտուրան, իր լեզուն ու գրականությունը։ Օտար բռնակալների ճնշման տակ և դրա հետևանքով նա խրվել է խավարի, հետամնացության ճահճի մեջ, և նրա լեզուն էլ մնացել է անմշակ ու հեղեղվել իշխող ժողովուրդների լեզուներից փոխանցված բազմաթիվ ավելորդ ու անհարկի բառերով. Վեհապետից չեմ նեղանում՝ աչքի լույս,— ղիմելով ժողովրդին՝ ասում է Արսիյանը,— մեր բախտիցը ժամանակը էնպես ծովել էր մինչև հիմա, որ մարդ իր գլուխը չէր կարում պահել, որ Զոա լեզվի գարգը փաշիլը Էս ա պատճառը՝ որ մեր նոր լեզվի կեսը թուրքի ու Պարսից բառ ած։

Այս բոլորից, իհարկե, սխալ կլինի հետևյալն, թե Պ. Արսիյանը միայն հայ ժողովրդին ու նրա լեզվին օտար բռնակալների պատճառած քաղաքական կողմերն է նկատում ու խաբանում. սխալ կլինի նաև կարծել, թե Արսիյանը անտեսում էր բոնի ասիմիլյացիայի հանդեպ հայ ժողովրդի ու նրա լեզվի ցուցաբերած վիթխարի ուժը և մեծ դիմադրողականությունը։

Ո՛հ, չնայած պարսկական-թուրքական ասիմիլյատորների գործադրած բոլոր ջանքերին՝ բնաջնջելու, ոչնչացնելու հայ ժողովրդին ու նրա լեզուն, այնուամենայնիվ, Արսիյանի կարծիքով, թե մեկը և թե մյուսը երբեք էլ կուլ չեն գնացել և միշտ էլ, դժվարին արգելքներ հաղթահարելով, պահել են իրենց գոյությունը։ Իսկ Արսիյան-հայրենասերը ներկայացնում է բավական դիպուկ ու պատկերավոր ձևով. Վեհ ջրհեղեղը,— ասում է նա,— որ մեր աշխարհը մտավ, այսինքն էն գազան ազգերը, որ մեր աշխարհով անց կացան, սար ըլեր, նրանց ոտի տակին կհավասարվեր, ծով ըլեր. կցամաքեր, բայց մեր ազգը՝ սարի տեղակ իր դռը, ծովի տեղակ՝ իր արինը դեմ անելով, է՛ն հոգին ուներ, որ էնպես զորեղ ազգերը կորան, փչացան, նա էլի իր գլուխը նրանց փռուցը հանեց, էլի սկսեց զորանալ, բազմանալ ու զորդ ա, թե իր աշխարհ չկարաց ձեռին պահել, իր լեզուն, իր հավատը (ընդդեմները Արսիյանինն են — Ա. Մ.) պահեց, որ ոչինչ ազգ չէր կարող անել»։

Բնութագրելով հայ ժողովրդի և նրա լեզվի անցյալ ու ներկա վիճակը, Պ. Արսիյանը միաժամանակ գտնում էր, որ նրանք միմյանցից ինչ-որ անօտո երևույթներ չեն, այլ մեկի գոյությունը սերտորեն պայմանավորվում է մյուսով. լեզվի ոչնչացմամբ ու բնաջնջմամբ մեռնում է այն կրող ժողովուրդը, և, ընդհակառակը, դրա ոչնչացմամբ ու բնաջնջմամբ էլ մեռնում է նրա լեզուն։ Այդ երկու կողմերի գիտակցման շնորհիվ էլ, նա, եթե մի կողմից շեշտում էր, որ լեզվի վիճակը պայմանավորվում է տրվյալ ժողովրդի կյանքով ու քաղաքական հանգամանքներով, որ ժողովրդի տնտեսական-հասարակական կյանքի զարգացումն է լեզվի առաջընթացի հիմնական պայմանը, ապա մյուս կողմից էլ տեսնում ու նշում էր հենց

¹ Խ. Աբովյան, ԵԼԺ, հատ. 3, էջ 64։

² Նույն աեղում, հատ. 4, էջ 98։

լեզվի հսկայական դերն ու նշանակությունը ժողովրդի գոյի պահպանության գործում: Այդ նույն պատճառով էլ լեզուն Արուվյանի հասկացողության մեջ ժողովրդի գոյության, պահպանության հիմնական գործոններից մեկն է, նրա անդամները միմյանց հետ միաձուլող ուժը. «Մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը, — ասում է նա, — լեզունն է առհավատը: Լեզունը փոխիր, հավատը ուրացիր, էլ ընչո՞վ կարես ասիլ, թե ո՞ր ազգին էս»¹. Կամ՝ «Մեկ ազգի պահողն էլ լեզունն է առհավատը, թե սրանց էլ կորցնենք. վայն է կել ա մեր օրին»²:

Իսկ ինչո՞վ է պայմանավորվում լեզվի այդ կարևորագույն դերը. անշուշտ՝ այն բանով, որ նա հանդիսանում է մարդկանց փոխադարձ հաղորդակցման, միմյանց հետ համագործակցության մեջ մտնելու և հասարակական կյանքի առաջ մղելու հիմնական միջոց: Եվ իրոք. Խ. Արուվյանի ճիշտ հասկացողությամբ լեզուն ժանրաշատ ամենաազնիվ գործիքն է, որի միջոցով մի մարդ իր ներքին հոգեվիճակն է արտահայտում այլ մարդկանց, առանց որի ոչ անհատը, ոչ էլ մանավանդ ժողովուրդը ի վիճակի չէ մտքերն ու զգացմունքները հաղորդելու ուրիշներին, մասնավոր՝ ավանդելու հաջորդ սերունդներին (ընդգծումը իմն է— Ա. Մ.)»³. Կամ՝ նորահայտ «նախաշավիղ»-ի առաջարկում նա գրում է. «Եվ Ամենարարին էնգուր համար տվեց մեզ կարողություն խոսալու, որ մեր միտքը այլոց իմացանք և նրանց ևս իմանանք (ընդգծումն իմն է— Ա. Մ.)»⁴, իսկ մի այլ տեղ էլ նա լեզուն համարում է «մարդու ամենահարկավոր և գերազանցագույն կարողություններից» մեկը և գտնում, որ «նա է բանալի, հալելի ներքին զգացողության մերոց»⁵:

Ծիշտ է, ինչպես տեսնում ենք, լեզվի էությունը որոշելիս Խ. Արուվյանը սխալվում է, երբ խոսելու կարողությունը համարում է աստծո պարգև, ինչպես և շատ ավելի է ընդգծում լեզվի միջոցով ներքին հոգեվիճակ ու զգացմունքներ արտահայտելու հանդամանքը, բայց երբեք էլ չի անտեսում հիմնականը. այն, որ լեզուն իսկապես մարդկային հաղորդակցման, մարդկանց կողմից իրար մտքեր հաղորդելու միջոց է:

Նման հարցադրմամբ Արուվյանը, անշուշտ, օրյեկտիվորեն տեսնում է լեզվի և մտածողության միջև եղած կապը: Եվ միայն այդքան. և, հետևաբար, ճիշտ չի լինի կարծել, թե լեզվի ու մտածողության կապի վերաբերյալ նա որոշակի տեսակետ է մշակել և կամ թե չէ մեկնարանել լեզվի և մտածողության անքակտելիությունը ու փոխադարձ պայմանավորվածությունը: Այդ մասին Արուվյանի մոտ ուղղակի և ոչ մի խոսք չկա: Իր այդ թերի կողմերով հանդերձ, սակայն, լեզվի վերաբերյալ Արուվյանի ըմբռնումը մի ամբողջ նորություն էր հայ լեզվաբանական մտքի պատմության մեջ. նորություն էր ոչ միայն այն իմաստով, որ նա մատնանշում էր լեզվի հիմնական հաղորդակցման ֆունկցիան, այլև այն իմաստով, որ նույն այդ երևույթից բացատրում էր նաև լեզվի հսկայական դերն ու նշան-

¹ Խ. Արուվյան, ԵՂԺ, հատ. 3, էջ 63:

² Նույն տեղում, էջ 5:

³ Նույն տեղում, հատ. 5, էջ 15:

⁴ Տե՛ս «նախաշավիղ»-ի նորահայտ օրինակի առաջարկը:

⁵ Խ. Արուվյան, ԵՂԺ, հատ. 5, էջ 312:

նախությունը ժողովրդի կուլտուրական կյանքի զարգացման ու առաջընթացի գործում:

Նշանակում է՝ Արուսյանի համար լեզուն ոչ թե հոգեբանական, այլ նախ և առաջ հասարակական կյանքը առաջ մղող հասարակական երևույթ է: Այս տեսակետից ուշագրավ է և այն, որ Ս. Արուսյանը, լեզուն դիտելով իրեն մտքի հաղորդակցման միջոց, միաժամանակ նկատում է ու մատնանշում նրա արտահայտման երկու ձևերը. «Երբ մարդ կամենում ա՛,— գրում է նա,— որ իր միտքը այլոց հայտնի, խոսում ա: Ուրեմն խոսի՛լ կնշանակի իր միտքը այլոց հայտնել (ընդգծումն իրենն է— Ա. Մ.): Մարդ երկու կերպով է իր միտքը այլոց հայտնում, խոսելով՝ երբ լսողն մերձ է, և գրով՝ երբ լսողն հեռի է»¹. Ըստ այդմ էլ հենց բանավոր խոսքից դատ նա բավական բարձր է գնահատում գրավոր լեզուն, որով այս կամ այն ժողովուրդը իր կյանքի ու կուլտուրայի հուշարձանները իսկապես կարողանում է ավանդել հաջորդ սերունդներին: Սա էլ ինքնին նշանակում է, որ Արուսյանը լեզվի՝ միայն կյանքի ընթացիկ շրջանում ունեցած դերը չէ ըմբռնում, այլև միաժամանակ դիտակցում է նրա պատմական արժեքն ու նշանակությունը, որպիսի հանգամանքը ևս ավելի է խորացնում կենդանի լեզվի համար նրա մղած պայքարի բովանդակությունը:

Իսկ այդ ամենը բնավ էլ պատահական չէր. լեզվի համար Արուսյանի մղած գործնական պայքարը խարսխված էր որոշակի տեսական հիմքի վրա, որն ընդգրկում էր ոչ միայն վերահիշյալ, այլև լեզվի ծագման հարցը: Դեռ, ինչպես հայտնի է, լեզվաբանությունն ունի ինքնուրույն հարցերից մեկն է, որի վերաբերյալ բազմազան տեսություններ² են հյուսվել:

Ս. Արուսյանի շրջանում տակավին իշխող էր լեզվի ծագման աստվածաբանական տեսությունը, բայց դրա կողքին առաջ էր քաշվել նաև ստոյիկների ու էպիկուրյանների կողմից ստեղծված բացառապեսություններ, բնածայնությունների կամ նմանաձայնությունների տեսությունը: Վերջինս առաջինի համեմատությամբ ինչպես վաղ, այնպես էլ վերջինի շրջանում անշուշտ առաջադիմական էր, որին էլ հետևում է Ս. Արուսյանը. «այսպես՝ նրա կարծիքով «Առաջաստեղծ մարդիկ չունէին դայլ լեզու, բայց եթէ դայն կատարելապէս, որ անասնոցն է բնական, այսինքն առ ի արտայայտել նոցա գործումութիւն, գործախոսութիւն, դարմանս և զարհուրանս, նոքա գայսօրինակ վանկս միայն արտասանէին, որպիսիք են, ո՛հ, վայ, հա, հոյ, ֆույ, ախ, պապա և այլն: Այսոքիկ հնչմունք գտանին համարեալ թէ յամենայն լեզուս երկրի իրր նշան համանման զգացմանց և են նախկին սկզբունք համայն լեզուաց: Բայց այս բնածին էր մարդոյ գամենայն ինչ, զոր ետեսն, լուաւ, զգաց և գմիտս իւր ի վերայ իրացս, բառիւք նշանակել, այսինքն ոչ միայն արտաշնչեալ վանկիւք, այլ հնչմամբք՝ յատկացելովք և բաղմապատկելովք ի ձևոն կոկորդի, լեզուի, ատամանց, շրթանց և հոտոտելեաց: Հնչմունք՝ զորս կարելի է բաժանել կրկին՝ ի յազում վանկս: Անասունն միայն արտաշնչէ զհնչումն իւր, այլ մարդն՝ յաղկացուցանէ և խօսի»:

¹ Ա. Արուսյան, *Եկեղ, հատ. Ծ, էջ 117*.

² Դրանց մասին մանրամասն տե՛ս Հր. Աճառյան—Վիակատար քերականություն. «այոց լեզվի...» ներածություն, 1933, էջ 49—83.

Մարդն ունենալով զրնաձիր ձգտումն նմանաբերութեան, հետ զհետէ կատարելագործեաց զայս ընդունակութիւն: Այսորիկ ազագաւ առաջին սկզբունք լեզուի զինի այնոցիկ հնչմանց արտայայտողաց զգացութիւնս մեր, էին բառք՝ նմանաձայնք այնոցիկ՝ որք լսելի եղեն: Այսպէս ստեղծանեն մանկունք և այժմ իսկ զլեզու իւրեանց և նշանակեն զիրս ըստ հնչմանցն, զորս ինքնին լսեն զնոցանէ: Զոր օրինակ զոչխարն քա անուանին, զեղն բո, որպէս և յունարէն իսկ եղն՝ բուս կոչի: Այժմեան լեզու մեր ի ձեռն ազգի ազգի փոփոխութեանց թէև կորուսեալ է զրնական յատկութիւն այնր մանկական հնչմանց առաջին մարդկան, բայց և այնպէս ոչ խսպառ, այն զի և արդէն իսկ կարելի է ի բազում բառս իսկապէս լսել թէ զիարդ նմանութեամբ միայն բաղկացեալ են նոքա: Զոր օրինակ՝ որոտ, կայծակ, գալարիլ, զլորել, գոռալ, զղրղալ, բնդալ, խշշալ, նրնալ, բառացել և այլն: Այս ամենայն բառք՝ որոց նմանիք բազում են, բաղկացեալ են անտարակոյս ըստ նմանութեան այնոցիկ հնչմանց, զորս ինքեանք նշանակեն: Բայց զգալի էր մարդոյն նշանակել նոյնպէս բառիւք զառարկայս, զորմէ ինքն ոչ լուաւ, այլ զորս ետեսն և այլովք զգայարանօք զգաց: Նոյնպէս և աստ ձեռնտու եղև նմա ձկտումն նմանաբերութեան՝:

Այս երկար մեջբերումից էլ պարզ երևում է, որ դաւանելով լեզվի ծագման թե՛ ձայնարկությունների և թե՛ բնաձայնական կամ նմանաձայնական տեսությանը, Խ. Արուվյանը, այնուամենայնիւ, տալիս է մարդկային լեզվի ծագման յուրովի բացատրություն. եթե նախնական մարդու լեզուն նույնական է եղել կենդանիների լեզվին, ապա հետագայում սկսել է տարբերվել ու անջրպետվել նրանից: Ի տարբերություն կենդանիների, մարդիկ իրենց զգացությունները արտահայտել են բառերով ու սկսել խոսել հոգաբաշխ լեզվով: Ըստ որում զինի այնոցիկ հնչմանց արտայայտողաց զգացութիւնս մեր՝ կազմվել են բնաձայնական կամ նմանաձայնական բառեր, որոնք ուղղակի նշանակել են զիրս ըստ հնչմանցն: Բայց սրանով լեզվի առաջացման պրոցեսը, իհարկե, չի ավարտում. մարդը բառերով կոչել է ոչ միայն «հնչմունք» ունեցող առարկաներն ու երևոյթները, որոնց ձայնը լսելի է ու զգալի, այլև այնպիսիք, զորմէ ինքն ոչ լուաւ, այլ զորս ետեսն և այլովք զգայարանօք ըզգացաւ: Այստեղ էլ հենց Խ. Արուվյանը մեծ տեղ է հատկացնում նմանաբերությանը (անալոգիային), գտնելով, որ մարդը հետզհետե կատարելագործել է զայս ընդունակութիւնը:

Այսպիսով, թեև Խ. Արուվյանը չի լուծում (և չէր էլ կարող լուծել) լեզվի ծագման բարդ պրոբլեմը, բայց, այնուամենայնիւ, իր դաւանած տեսությամբ ու իր տված յուրատեսակ մեկնաբանությամբ կանգնում է առաջադիմական դիրքերում: Դա, իհարկե, արտահայտվում է ոչ միայն այն բանում, որ նա մերժում է լեզվի ծագման աստվածաբանական տեսակետը և ըստ էության ըմբոստանում զրա դեմ, այլև նրանում, որ այդ հիմքի վրա որոշակի քայլեր է անում մեկ լեզվից այլ լեզուների առաջացման և նրանց միջև եղած բնականությունները տեսնելու ուղղությամբ: Եւ իսկապէս. Խ. Արուվյանը բնավ էլ չի փնտռում լեզվի ծագման ձայնարկությունների, բնաձայնական կամ նմանաձայնական տեսության սահման-

ներում և ոչ էլ լեզուների բոլոր իրողությունները բացատրում սոսկ «համանման զգացմանց» «նախկին սկզբունքով»։ Նա բազմիցս գիտողություններ է անում և այն մասին, որ ժողովուրդների բաժանման զուգընթաց և նրանով պայմանավորված լեզուները ևս բազմացել են ու զանազանվել միմյանցից»... «Գիւրին է դմտաւ առնուլ, — աւում է նա, — թէ ի բաժանել և ի սփռել ժողովրդեան ի զանազան կողմանս հերկի, պարա էին նույնպէս և լեզուքնոցա բազմանալ և զանազանիլ ի միմեանց»¹ և կամ՝ «Իմեցողք յարեալս կամ յարեմուտս տեսին միշտ զերկինս ի վերայ իշեանց, զերկիր ի ներքոյ ոտից, շո. բջ զիւրե և զծառս, կարելի էր թէ անուանք առարկայիցս այսոցիկ ամենեցուն ի սկզբանս մի էր յամենայն լեզուս և ըստ արմատաց իւրեանց։ Գարելի է թէ և այժմ ևս լինիցին. այլ յոլովակի փոփոխութիւն և խառնակումնս նոցա անհնարինս առնէ մեզ քննել զարմատ և գտանել զկերպ բազկացման նոցա»²։

Այստեղ, իհարկե, կարևորն այն չէ, թե Արուսյանը բոլոր առարկաների անունները, թեև ենթադրաբար, «ի սկզբանս» միևնույն է համարում, այլ այն, որ նա նկատում է տարբեր լեզուների բառերի միևնույն արմատից ծագած լինելու հանգամանքը, մի բան, որ լեզվարանական գիտությունը զարգացման հիմքը դարձավ համեմատական լեզվաբանության երևան գալու սկիզբից և եթէ Այսպէս, օրինակ՝ Խ. Արուսյանը գրում է. «Երբայերէն հայրն Ավ կոչի, յունարէն և լատինարէն՝ փատեր, յիտալիերէն՝ փադրէ. Անգլիերէն և Գերմաներէն՝ ֆատէր. Հայերէն՝ հայր. տաճկերէն աթայ, պարսկերէն՝ փադր և այլն»։ Կամ՝ «...մայրն Եփրայերէն՝ եմ անուանի, յունարէն՝ մէտեր, լատինարէն՝ մատեր, պարսկերէն՝ մադեր, իտալիերէն՝ մադրէ, գերմաներէն՝ մուտտեր և այլն։ Նոյնպէս անունդ կով, ի բազում լեզուս է նմանաձայն. զոր օրինակ՝ ռուսերէն կոբովա՛յ անգլիերէն՝ կով, գերմաներէն՝ քուհ»³։

Թեև հնգելլոպական լեզվաբանության մեջ մտնող լեզուների շարքում հիշատակվում է նաև երբայերենը, որ պատկանում է սեմական ընտանիքին, և տաճկերենը, որ ալթայական լեզվաբանության լեզուներից մեկն է, Խ. Արուսյանը դրանով ու միաժամանակ բնաձայնության մոմենտոր նկատի առնելով հանդերձ, այնուամենայնիվ, ճիշտ կերպով տեսնում է մի շարք լեզուների բառային բնոյժանութունները, այսինքն՝ միևնույն արմատից տարբեր բառերի ծագումը։ Իսկ դա ևս պատահական չէր. քաջ գիտենալով մի շարք լեզուներ (գերմաներեն, ռուսերեն, ֆրանսերեն, լատիներեն, հունարեն և այլն) ինչպէս և ծանոթ լինելով նորածին հնգելլոպական լեզվաբանությանը, նա ըստ էության հանգեւ էր գալիս իրեն դրա առաջին ներկայացուցիչը հայ իրականության մեջ։

Խ. Արուսյանը ոչ միայն քաջ գիտեր իր ժամանակի այն լեզվաբաններին, «որք հետախոյզն լինին ածանցել զծագումնս զանազան ազգաց ի միոյ ցեղէ ըստ նմանութեան լեզուաց նոցա»⁴. այլև ինքը ևս այդ կարգի հետազոտողներից մեկն էր. ուստի և նա իրավամբ մտնում է պատմահամեմատական լեզվաբանության վաղ շրջանի առաջին ներկայացուցիչների (Գրիմ,

¹ Խ. Արուսյան, ԵԼԺ, հատ. 5, էջ 315։

² Նույն աւելում, էջ 316։

³ Նույն տեղում, էջ 316—317։

⁴ Խ. Արուսյան, Նոր տեսական և գործնական քերականութիւն... Յոտաջարան։

Ռասկ, Ֆր. Բոպար, Հ. Պետերման, Վինգիշման, Վաստոկով և ուրիշներ) մեջ¹ Դեռ ավելին. հայտնի հայագետ Հ. Պետերմանի հետ ունեցած անձնական ծանոթությունն ու փոխադարձ նամակագրությունը² ինքնին ցույց են տալիս, որ նա մեծ դաշնակից էր հնգեվրոպաբաններին և քայլում էր դրանց հետ միևնույն ճարքում:

Այդ հաստատություն է ոչ միայն հիշատակված, այլև լեզվական այն փաստերով, որ Արուստյանը բերում է իր՝ Շնոր տնտական և դործնական քերականութիւն ուսաց փասն հայոց...» տակավին անտիպ աշխատություն մեջ: Իսկ դրանք, պետք է թանկ, բավական գիպուկ ու էական փաստեր են, որովհետև վերաբերում են լեզվական այնպիսի իրողություններին, ինչպիսիք են թվականները, դերանունները, օժանդակ բայերը, որոնք, ինչպես հայտնի է, լեզուների բնահանրությունները և ցեղակցությունը որոշելու հիմք են կազմում: Ավելորդ չենք համարում մեջ բերել այդ փաստերը.

Числительные имена

ռուս.	լատ.	գերմ.	գաղ. (ֆրանս.)	հայ.	
Три	tres	drei	trois	երեք	ерек
четыре	quatre	vier	quatre	չորս	чорс
—	quinque	funf	cinq	հինգ	гннк
шесть	sex	sechs	six	վեց	вещ
семь	septem	sieben	sept	եօթն	ѐтн
восемь	octo	acht	huit	ութ	ут
—	novem	neun	neuf	ինն	инн
десять	decem	zehn	dix	տասն	тасн
—	quadragesima	vierzig	quarante	քառասուն	карасун

Местоимения

я	—	—	—	ես	
ты	tu	du	tu	դու	ду
он	—	—	—	նա	на
мы	—	—	—	մեք	мек
они	—	—	—	նաքա	нока
сей	—	—	—	այս	айс
то	—	—	—	դա	да
тот, этот	—	—	—	այդ	айд
мой	—	mein	mon	իմ	им

¹ Այդ մասին առաջին անգամ նշել է դոց. Գ. Ջոհնսոնը իր «Խ. Արուստյանը որպես լեզվաբան-քերականագետ» հոդվածում և ապա՝ Դ. Ջրադաքսյանյանը իր «Лингвистические основы первых грамматических трудов по русскому языку для армян и Новой теоретической и практической грамматики русского языка Х. Абовяна» թեկնածուական դիսերտացիայում:

² Խ. Արուստյանին Հ. Պետերմանի ուղարկած նամակը տե՛ս Եր. Շահադիյի «Դիվան Խ. Արուստյանի» գրքի առաջին հատորում (էջ 287—288), Հ. Պետերմանը իրրե հայագետ հայտնի է իր «Grammatica linguae armeniacae» լատիներեն աշխատությամբ (1837 թ.):

Личные глаголы

есмь	sum	bin	suis	եմ	ем
еси	es	bist	es	ես	ее
есть	est	ist	est	է	э
есмъ	sumus	sind	sommes	եմք	емк
есте	estis	seid	etes	էք	ек ¹

Բայց գրանք, իհարկե, բոլորը չեն. գտնելով, որ «слова, находящиеся на русском, немецком и французском языках и имеющие одинаковый звук и смысл»², Խ. Արովյանն ի հաստատումն իր մտքի, բերում է նաև բառերի մի ամբողջ շարք, որը բավական հետաքրքիր պատկեր է ներկայացնում. նախ՝ այնտեղ տեղ գտած շուրջ 130 բառերից շատերը այնպիսիք են, որոնք համեմատական լեզվաբանության հաստատմամբ ծագում են շխմք-լեզվից և այդ պատճառով էլ բնագնաներ են հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ մտնող շատ լեզուների համար. գրանցից են, օրինակ, блоха — Floh (գերմ.) — լու, вино — Wein (գերմ.) — vinum (լատ.) — vin (ֆր.) — գինի, ветвь — սստ, град — կարկուտ, брат — եղբայր, день — տիվ, дверь — դուռն, дом — տուն, дочь — Tochter (գերմ.) դուստր, лучь — լոյս, луна — lune (ֆր.) — լուսին, локать — լակիլ, мать — մայր, муравей — մրջյուն, месяц — ամիս, мясо — միս, язык — լիզու, сердце — սիրտ, око — ակն, ручей — ասու, сесть — նստել, сон — քուն, смерть — մահ, корова — Kuh (գերմ.) — կով, chien (ֆր.) — շուն, dent (ֆր.) — ատամն, новый — նոր, ноготь — եղունգ, жена — կին, кость — ոսկոր, умереть — մեռանիլ, septogone (ֆր.) — եօթնանկիւն, , семя — Same (գերմ.) — սերմն և այլն:

Երկրորդ, որոշ բառեր էլ, իրեն փոխառություններ, նույնպես բնագնաներ են մի շարք լեզուներում. այսպես՝ փոխ են առնված ա) ասորերենից՝ կաթսա — kotēl, կատու — кошка — Katze (գերմ.), շամփուր — crieen (ֆր.), արսոր — Ausweigung (գր.), բ) պահյալերենից՝ պասկերենից՝ պաակ, որ Արովյանը համեմատում է ոռուսերենի брак բառի հետ, զանգ — казна, կանեփ — конопля, կարմիր, որ համեմատվում է ոռուս. красный բառի հետ, ճրագ — համեմատվում է ոռուս. свечка բառի հետ, համար — нумер, գ) հունարենից՝ պալատ — palais (ֆր.) — Palast (գր.), լապտեր — лампада — Lampe (գր.), տետրակ — тетрадь, եկեղեցի — e'glise (ֆր.), փոս — fosse (ֆր.), դ) ֆրանսերենից՝ պարոն — համեմատվում է ոռուսերեն барин բառի հետ և այլն:

Այս բոլորից բացի, Խ. Արովյանի կազմած բառացանկում կան նաև այնպիսի բառեր, որոնց ծագումը ցարդ հայտնի չէ. գրանցից են, օրինակ՝ գլուխ — голова, ոջիլ — вошь, խուլ — глухой, գոռոզ — гордый, մրսել — замерзать, կակադել — занкать, կտոք — карета, կաշի — кожа, կոնք — кадка, կարպետ — ковёр, մութն — тьма, դովել — хвалить, պտուղ — плод, աշուն — осень և այլն: Դրանց ծագման մասին լեզվաբանական գրական-

¹ Խ. Արովյան, «Նոր տեսական և գործնական քերականութիւն ոռուսաց վասն հայոց...», Հայկական ՍՍՏՖ Գեաական թանգարան, Խ. Արովյանի արխիվ, գործ № 27:

² Նույն աեղում:

նության մեջ հայտնուել են բազմազան կարծիքներ. ըստ որում մասնա ևս այդ բառերից մի քանիսը (ինչպէս՝ գլուխ, մրսել, աշուն) կցել են ուսանողներին համապատասխան ձևերին¹. արդոք համադրված հիշյալ ձևերը կասու ենին իրար հետ, թե նրանց նմանութիւնը բոլոր պէպքերում զուտ պատահական է: Դժուար է պնդել թե մեկը և թե մյուսը, նրանց ծագումը վերջնականապէս պարզված չլինելու պատճառով: Բայց եթե ընդունելու լինենք, որ դրանք բոլորը սոսկ պատահական նմանութիւններ են, ապա այս պէպքում ևս չենք կարող բացատրել Արուսեանի կողմից լեզվական փաստերը համադրելու և համեմատելու լուրջ կարողութիւնը:

Ճիշտ է, իհարկե, նրա համեմատութիւնները, առանձին բառերի միևնույն արմատից ծագած լինելը չեն ապացուցվում ու հիմնավորվում գեոկոս հնչունական համապատասխան օրենքներով ու օրինաչափութիւններով, Արուսեանը տակաւին չի տարբերում բուն հիմք-լեզվից ծագող ձևերը տարբեր լեզուներից կատարված կամ մի լեզվից մի այլ լեզվի անցած փոխանութիւններից և հաճախ էլ, ինչպէս տեսանք, զուգակցում է պատահական նմանութիւն ունեցող ձևեր, բայց, այնուամենայնիւ, նրա մոտեցումը ամբողջութեամբ վերցրած նույնպէս մեծ նորութիւն էր հայ լեզվաբանական մտքի պատմութեան մեջ: Արուսեանը փաստորեն առաջինն էր, որ հայերենի միայն լատիներենի, ֆրանսերենի, գերմաներենի, այլև ուսներենի հետ էր համեմատում, նկատելով վերջինիս ու հայերենի մի շարք բառերի անօխտելի ընդհանրութիւնը:

Այստեղ անպայման պետք է նկատի առնել և այն, որ Խ. Արուսեանի, իբրև տղամա-համեմատական լեզվաբանութեան առաջին հայ ներկայացուցչի թերութիւնները պայմանավորվում են նրա ժամանակի լեզվաբանական գիտութեան ընդհանուր մակարդակով: Նույն այդ լեզվաբանական գիտութեան, ինչպէս հայտնի է, անցյալ դարի 30—40-ական թվականներին ոչ միայն լեզուների ընդհանրութիւնները որոշելու միջոցը համեմատական մեթոդը, չէր մշակել, այլև դրա հետ կապված որոշակիորեն չէր տարբերակել նաև ցեղակից լեզուները և լեզվական ընտանիքները, ուստի միանգամայն հասկանալի պատճառներով Արուսեանի մոտ ևս բացակայում է հստակ տարբերակումը: Բայց, որ կարևոր է, այսպիսի պայմաններում նա օրյեկտիվորեն առաջնութեց քայլեր է անում լեզուների ցեղակցութեանը որոշելու ուղղությամբ, գիտակցում ու մատնանշում է, որ հասարակական կյանքի պատմական զարգացման ընթացքում և միևնույն լեզվի կրած փոփոխութիւնների հետեանքով ու ճյուղավորման ճանապարհով առաջ են եկել նորանոր լեզուներ: Այս ըմբռնումն էլ հենց Խ. Արուսեանի լեզվագիտական հայացքների միջուկն է կազմում, որի հիման վրա նա ընդհանուր առմամբ ճիշտ է պատկերացնում ոչ միայն լեզուների առաջացման, այլև նրանց զարգացման ու փոփոխութեան պրոցեսը:

Եվ իսկապէս. Խ. Արուսեանը երբեք էլ լեզուն չի գիտում իբրև մեկընդմիջ տրված ու անփոփոխ մի բան, այլ ընդհակառակը, այն համա-

¹ Այսպէս՝ Lagarde-ն «աշուն» բառը համադրում է ուսներեն «осень» համանիշին, իսկ չյուրջմանը մերժում է այդ (չր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 1, էջ 405), Meillet-ը կցում է հսլ. glava, ուսլ. голва, լիթ. galva, հպրուս. gallū բառերին (նույնը հատ. 2, էջ 224) և այլն:

րում է շարունակ փոփոխվող ու զարգացող երևույթ: Այդ փոփոխման ու զարգացման հիմքերն էլ տեսնելով հեռավոր անցյալի խորքերում, նա իրավացիորեն գտնում է, որ կատարված փոփոխություններով պայմանավորված՝ ա) մեկ լեզվից առաջ են եկել տարրեր լեզուներ, բ) «ի նոյն լեզուէ» ածանցվել են տարրեր խոսվածքներ ու բարբառներ և վերծաղես՝ գ) հին լեզուները վեր են ածվել նոր լեզուներ:

Այդ բնորոշն էլ այն է, որ հիշյալ բոլոր դեպքերում Ս. Արուսյանը նկատի է առնում լեզվական թե՛ բնահանրությունները և թե՛ տարրերությունները: Այսպես, օրինակ, նշելով, որ «ի մէջ բազում լեզուաց գոն նմանութիւնք», նա միաժամանակ գտնում է, որ նրանց միջև ժամանակի ընթացքում առաջ են եկել նաև հսկա տարրերություններ: Հեղինակն իր այդ միտքը հաստատում է մի շարք և հատկապես՝ գերմանական ու սլավոնական լեզուների փաստերով: «Սաքսոնք և Անգելք, ռաբմանացիք, գրում է նա, — ազգաւ տիրեալ 450 ամին զկնի Քրիստոսի Անգլիոյ, սերեցան անդ: Թէև լեզուն Բրիտաց տեղական էր անդ յայնմ ժամանակի, և գերմանացիք ընկալան բազում բառս ի նոցանէ, այլ գլխաւոր արմատ լեզուին մնաց Դերմ<աներէն>: և այժմ իսկ գտանի բազում նմանութիւն ի մէջ երկուց բարբառոցս, բայց այսուամենայնիւ երկոքին այսոքիկ լեզուք ի բազում իրս այլազգ բաղկացեալ, այժմ որ վսիսն գիտէ ընթեռնուլ և գրել, ոչ կարէ հասկանալ միւսոյն, առանց յատկապէս ուսանելոյ զայն: Աւ ի մէջ Դերմանացւոց իսկ գտանեն բազմազիմի տարածայնութիւնք բարբառոց: Այսպէս է և նմանութիւն լեզուաց բոլոր Սլավոնացւոց որ օրինակ՝ Պոլեակաց, Ռուսաց, Բոյեմաց, Վէնգաց և այլն»¹:

Ինչպես տեսնում ենք, Ս. Արուսյանը ոչ միայն մեկ լեզվից այլ լեզուներ, այլև միևնույն լեզվից տարրեր բարբառների առաջացումն է նկատում: Այդ տեսակետից, անշուշտ, հետաքրքրական է նաև գերմաներենի ու նրա բարբառների դոյացման մասին մասնագիտությամբ բժիշկ Նրգմանի կարծիքը, որ Արուսյանը սիրով մեջ է բերում իր «Դորպատյան օրագրություններ»-ում. «Ի բազում քաղցր գրուցատրութենէ սիրելւոյն իմոյ, — գրում է նա, — այս մի ինչ առաւել ցանկալի թուի ինձ պատմել ընթերցողաց իմոց, որ նոյնպէս հարկ սւոր է և վասն ազգին մերոյ (բնագծումն իմն է — Ա. Մ.): Ի խօսիլն մեր գտնազան լեզուաց, զի էր նա քաջ լեզուագէտ ոչ միայն եւրոպացւոց, այլ և աղիացւոց և աւելի զՉՏ լեզուս գիտէր նա ընթեռնուլ և գրել և փոփոխութիւն նոցա: «Ի Դերմանիայի միայն, ասէ, գտանին 100 տեսակ լեզուի, որ ի մէջ գերմանացւոց խօսի և է ածանցեալ ի մի և ի նոյն լեզուէ Դերմանացւոց»²:

Բայց հենց այստեղ էլ մենք տեսնում ենք, որ զրազվելով ու հետաքրքրվելով լեզուների առաջացման ու փոփոխությունների հարցերով, Ս. Արուսյանը հետապնդել է գործնական նպատակներ. նրան բավական հուզել ու հետաքրքրել է հայերենի առաջացման, կրած փոփոխությունների ու նրա պատմական ճակատագրի հարցը: Դրա շուրջն էլ հենց նա երկար խորհրդածել է, մտքեր փոխանակել Դորպատում գտնվող լեզվաբանների ու լեզվագետների հետ և, մխրճվելով հայերենի պատմությամբ խորքերը, ձգտել տալ նրա կրած փոփոխությունների բնահանուր պատկերը:

¹ Ս. Արուսյան, ԵԼԺ, հատ. 5, էջ 315:

² Նույն տեղում, հատ. 6, էջ 91-92:

Խ. Արտվյանի կարծիքով ինչպես մյուս ազգերի, այնպես էլ հայ ժողովրդի լեզուն երբեք էլ չի մնացել միևնույն կետի վրա. հայերի պատմական կյանքի հանգամանքներով պայմանավորված հայոց լեզուն ևս ժամանակի ընթացքում կրել է փոփոխություններ, ենթարկվել մեծ տեղաշարժերի: Պա էլ հենց այն ամուր հիմնական է, որից ելնելով մեծ լուսավորիչ-գեմոկրատը հանդես է գալիս տարածված այն կարծիքի դեմ, բոլորի հայերենը ուղղակի Հայկի լեզուն էր հռչակում: Լեզվի շուրջը Նրգմանի հետ ունեցած դրույթի կապակցությամբ նա, օրինակ, գրում է. «Յսուկն իմ, թէ անհնարին լինի փնձ հաւատալ, թէ լեզու մեր իցէ լեզուն Հայկայ, նա համաձայնէ ընդ այս օղի լեզու ասէ, առանց դրութեան գրէ-թէ յամենայն դարս փոփոխի՝ որոյ բաշում են օրինակք»¹:

Այսպիսով, լեզուների կյանքի նկատմամբ Խ. Արտվյանի հանդես բերած մոտեցումը պատմական է: Եվ հենց դրանով պետք է բացատրել, որ նա ոչ միայն հայերենը Հայկի լեզուն չի համարում, այլև քննադատում ու մերժում է այս կամ այն լեզուն նախնական ու հնագույն համարելու տեսակետը. «Չէ հայտնի,— գրում է Արտվյանը,— թէ որ լեզու հնագույն իցէ քան դամենայն, յորմէ և այլք ծաղեցան: Ամենահնագույն լեզուն որ և մինչև ցայսօր ժամանակի տեէ, է Հրէիցն, յորս գրեալ կան գիրք Մովսէսի և բազումք ի գրուածոց Հին Կտակարանիս. «Եթէ լեզու Հայոց այսքան փոփոխեցաւ, մինչև հաղիւ երեւիլ թէ նոր լեզու մեր ի հնոյն իցէ ասեալ, զիարդ կարէր ուրեմն Հրէիցն այնպէս մնալ անփոփոխ մինչև ցայսօր, որպէս խօսէին առաջին մարդիկ, զի և լեզու ամենայն ազգաց յամենայն յամէ փոփոխի»²:

Այսքանից էլ գծվար չէ նկատել, որ լեզվի փոփոխության վերաբերյալ Արտվյանը ոչ թե թողնիլ ակնարկներ է անում ու անցնում, այլ զարգացնում է մի ամբողջ տեսություն. դրա միջոցով էլ նա ոչ միայն լեզվի հնագույն ծագումն է արձանագրում, այլև օրինաչափական է համարում հին լեզուներից նոր լեզուների առաջացումը: Քանի որ լեզուն շարունակ փոփոխվող ու զարգացող երևույթ է, ապա հենց դրանով էլ պայմանավորված ժամանակի ընթացքում առաջ են գալիս նոր լեզուներ: Արտվյանի մեկնարանություններ այդպիսի պրոցես տեղի է ունեցել նաև հայոց լեզվի կյանքում, և աշխարհարարն էլ այլ բան չէ, քան դրարարից ծնունդ առած և նրանից շատ ու շատ փրոզուկություններով տարրերվող մի նոր լեզու:

Արդ՝ ծագում է մի այլ հարց. փակ ինչով է բացատրում Արտվյանը լեզվի փոփոխությունները, հնի փոխարեն նորի առաջացումը. դրանց համար նա նշում է մի քանի պատճառներ՝ ժողովուրդների գաղթերն ու տեղափոխությունները, նրանց կյանքի քաղաքական և մինչև իսկ աշխարհագրական պայմանները: Որ դրանք լեզուների փոփոխության ու դարգացման գործում համապատասխան չափով քիչ թե շատ դեր են խաղացել, ոչ ոք չի կարող ժխտել: Բայց մեզ հայտնի է, որ լեզվի փոփոխությունը, նրա անցումը մի որակից մի այլ որակի կատարվել է լեզվի, իրեն առանձնահատուկ հասարակական երևույթի, ներքին զարգացմամբ, նրա հին որակի տարրերի աստիճանական մահացման և նոր որակի, նոր կա-

¹ Խ. Արտվյան, ԵՂԺ, հատ. Ծ, էջ 93:

² Նույն տեղում, հատ. Ծ, էջ 94:

ոռացվածքի տարրերի աստիճանական կուտակման ու ծավալման միջոցով, եվ նույն այս բաղադրի վրա էլ հենց հայոց լեզվում կատարված փոփոխությունները առաջ են բերել լեզվական մի նոր որակ, որ մի շարք էական գծերով կազմում է գրարարի հակադրությունը:

Գտնվելով իր ժամանակի լեզվաբանական մտքի շրջանակներում, Արուստանը չի կարողանում հասնել լեզվի ներքին զարգացման օրինաչափությունների ըմբռնմանը. ուստի հին հայերենից նոր հայերենի առաջացումը նա չի դիտում իրրե մեր լեզվի ներքին զարգացման անմիջական արդյունք ու արտահայտություն և ոչ պատահականորեն էլ հայերենի կառուցվածքային փոփոխությունը բացատրում է թուրքական-պարսկական լեզուների ազդեցությամբ, հակասելով, այդպիսով, լեզուների փոփոխության վերաբերյալ մշակած իր ընդհանուր կոնցեպցիային: Այսպես՝ նա գրում է. «Ժողովրդի մեծագույն մասը, որ ֆուսել է հայաստանում, դարեր շարունակ թուրքական ժողովուրդների ազդեցության տակ լինելու և արտաքին ճնշման տակ կռացած լինելու, ուրեմն և ամենատարրական իմացություններից զրկված լինելու հետևանքով՝ կ'ընցաղի և տարազի հետ միասին ընդունել է նաև նրանց լեզվի կառուցվածքը (ընդգծումն իմն է — Ա. Մ.): Այդպիսով, առաջ է եկել մի բոլորովին ուրիշ բարբառ, որ ինչպես իր կազմով, այնպես էլ իր ձևով բոլորովին տարրեր է հնից և ամեն բանում նման է թաթարականին»¹:

Ժխտել չի կարելի, որ թուրքական-պարսկական ժողովուրդների ազդեցության հետևանքով հայ ժողովրդի կենդանի-խոսակցական լեզուն առատվել էր իսկապես ավելորդ ու անհարկի բաղադրով բառերով. անժրխտելի է և այն, որ ժամանակի ընթացքում առաջ եկած նոր հայերենը լեզվական-փերականական մի շարք իրողություններով նման է պարսկական-թուրքական լեզուներին: Բայց ո՛չ մեկը և ո՛չ մյուսը բնավ էլ չեն նշանակում, թե հայերենի նոր կառուցվածքը այդ լեզուների ազդեցության արդյունքն է ու հետևանքը: Ո՛չ. հայերենի անցած երկարաձիգ պատմական ուղին մերժում է նման ըմբռնումը: Եվ գրանում մենք լիովին համոզվում ենք, երբ մի հայացք ենք գցում հայերենի դրավոր հուշարձանների լեզվի կրած տեղաշարժերին, որոնց մեջ պարզ ու հստակ երևում է հին ձևերի աստիճանական մահացման և նոր ձևերի աստիճանական կուտակման ու ծավալման պրոցեսը, որ իր գրսևորումն է գտել հայերենի բոլոր ոլորտներում:

Չկարողանալով հասնել այդ ըմբռնմանը, Խ. Արուստանը, սակայն, հարցին մոտենում է որպես իսկական լեզվաբան. նա ոչ միայն ճիշտ կերպով հայերենի ու, այսպես կոչված, թաթարական լեզուների բաղադրանքի իրողությունների նմանությունն է նկատում, այլև երբեք էլ չի բացառում հին ու նոր հայերենների միջև եղած կապը և ոչ էլ անտեսում նրանց էական տարրերությունները²:

Եվ այնուհետև. թեև հայերենի նոր կառուցվածքը Խ. Արուստանը համարում է թուրքական լեզուների ազդեցության հետևանք, բայց երբեք էլ նրա մերժման պահանջը չի դնում, այլ Մ. Նալբանդյանի նման դիտում է իրրե կատարված, ավարտված պատմական իրողություն: Եվ ինչ-

¹ Խ. Արուստան, ԵԼԺ, հատ. 3, էջ 46:

² Նույն տեղում, ԵԼԺ, հատ. 3, էջ 48:

պես հետադաշտում նախնականը, այնպես էլ 30—40-ական թվականներին Արուստյանը ոչ թե այդ հանգամանքը նկատի առնելով գիմագարձ է լինում ղեկի գրառարը, այլ, ընդհակառակը, ամբողջապես կանգնում է կենդանի լեզվի իրավունքների պաշտպանության գիրքերում և առաջագրում նրա մշակման, կատարելագործման խնդիրը:

Այլ կերպ լինել չէր էլ կարող, Խ. Արուստյանի լեզվագիտական հայացքները անմիջապես բխում էին նրա լուսավորական-գեմոկրատական աշխարհայացքից, որի հիման վրա էլ հենց նա հանգես էր գալիս բոլոր՝ մեծ ու փոքր ժողովուրդների մայրենի լեզվի ջերմ ու կրքոտ պաշտպանի դերում:

Եվ նույն 30—40-ական թվականներին, Մ. Նախնադյանից առաջ, Խ. Արուստյանը այն միտքն էր զարգացնում, որ ոչ մի ժողովուրդ իրավունք չունի կուլ տալու մի այլ ժողովրդի և նմանապես մեկի լեզուն չպետք է կլանի մի ուրիշի լեզուն: Այս իմաստով էլ ինչպես 50—60-ական թվականներին Մ. Նախնադյանը առաջագրում էր. «Պահիր քո ազգութունը, պահիր քո լեզուն» գեղիզը, այնպես էլ Արուստյանը իր ժամանակին կոչ էր անում հայ ժողովրդին «պայլամ» պահելու, պահպանելու ու դարգացնելու սեփական լեզուն: Նշանակում է՝ մայրենի լեզվի անապարտություն, անկաշկանդ ու ազատ դարգացման խնդիրը ևս կարևոր տեղ է բռնում նրա լեզվագիտական տեսություն մեջ: Իրա փայլուն ապացույցը հենց այն է, որ նա հոգու ամբողջ ուժով ծառանում է լեզուն ապոտոելու ու խճողելու պրակտիկայի դեմ, գրելով, թե «Խառնիր քո սիրեկան խաչի հետ՝ ձուկը, չափար, կանֆետ (չափարեղեն), չամիչ, չիր, խիլիպալ, տես լինչ համ կունենա»:

... Ախր ո՞վ ա լսել, թե ծծմոր կաթը՝ մոր կաթիցը լավ ըլի: Էս֊ քան խառը լեզվի հետ դու էլ որ քո փրոքուկվաթսան, մրոքուկվաթսան ևս խառնում, ախր դրանից ինչ համ դուս կգա»¹:

Այսօրանից, իհարկե, սխալ կլինի եզրակացնել, թե իբր Խ. Արուստյանը մերժում է լեզուների միջև եղած փոխադարձ կապը և կամ էլ բացառում «ոուսերենի» բարերար դերը ինչպես այլ լեզուների, այնպես էլ հայերենի դարգացման գործում². Բոլորովին՝ Ամբողջապես ղերծ լինելով նեղ-ազգայնական մտայնությունից, նա ամեն մի ժողովրդի ու նրա լեզվի իրավունքն էր պաշտպանում և դրանով էլ ձգտում ճշգրտում ու հետաքննալից ժողովուրդներին բարձրացնել կուլտուրապես առաջ գնացած ազգերի կյանքի ընդհանուր մակարդակին: Հետևաբար, միանգամայն հասկանալի է, որ Խ. Արուստյանը ոչ միայն Արևելահայաստանը Ռուսաստանին միակցելու պատմական մեծ ահաբեկիչ նշանակություն էր նշում, այլև բազմիցս շեշտում էր ոուսերենի դրական դերը թե՛ հայերենի իրավունքների պաշտպանության և թե՛ հայ ժողովրդին լուսավոր կյանքի հաղորդակից դարձնելու գործում: Եվ միանգամայն բնական է, որ նա առաջինն է ստանձնում ոուսաց լեզվի պրոպագանդիստի մեծ պարտականությունը և միաժամանակ հին լեզվի դեմ և նոր լեզվի օգտին մղած պայքարում հաշվի առնում նրա պատմության հարուստ փորձը:

Եվ իսկապես. եթե Խ. Արուստյանի մոտ տակավին խոսք չկա այն մասին, որ ոուսերենը հայերենի բառապաշարի հարստացման կարևորագույն

¹ Խ. Արուստյան, ԵԼԺ, հատ. 3, էջ 64:

² Տե՛ս այդ մասին նաև՝ Հր. Մուրադյան, «Քաջատուր Արուստյան», 1939, էջ 90:

աղբյուրներից մեկն է, ապա, բնդհակառակը, նրա ընդհանուր դերի ու նշանակությունը, այն իմանալու անհրաժեշտություն, նրա քերականական իրողությունների վերաբերյալ մենք տեսնում ենք պայծառ հայացքների մի ամբողջ սխառում: Բնչպես հայտնի է, Խ. Աբովյանը իր ժամանակի՝ ռուսաց լեզվի լավագույն գիտականներից մեկն էր, և դա ոչ միայն լեզուն գործնականորեն իմանալու, այլև նրա քերականական իրողությունները, լեզվական օրինաչափությունները տեսականորեն ըմբռնելու տեսակետից. ռուսի առանց սխալվելու կարելի է ասել, որ նա ռուսաց լեզվին մոտենում էր որպես իսկական հետազոտող ու լեզվաբան: Դրա վալյուն հաստատումը նրա՝ Ճեոր տեսական ու գործնական քերականությունն ռուսաց վասն հայոց...» աշխատությունն է, որտեղ տեսական ու գործնական հարցերը իսկապես սերտ միասնություն են համադրություն են կազմում:

Խ. Աբովյանը, իբրև ռուսաց լեզվի պրոպագանդիստ, մեծ գիտակ ու տեսաբան, ոչ միայն անհրաժեշտ էր համարում ձեռք բերել ռուսաց լեզվի գիտությունը¹, ոչ միայն ուսերենը համարում էր ճշգրտագույն և ամենահարկավոր լեզուներից մեկը՝ «ի վերայ երկրի» և կամ էլ իր ձեռնարկով հիմքեր ստեղծում նրա ուսուցումը հաջող վարելու համար, այլև այն, ինչպես բազում փաստերն են ցույց տալիս, գիտում էր իբրև մի կարևոր գործոն հայ կյանքի, կուլտուրայի ու գրականության զարգացման բնագավառում: Ճե՝ որ լեզու, — գրում է նա, — յԱրևելաց ք յԱրևմտաց կուր. այնպես նպաստամատոյց լինել ազգի մերում առաւել..., քան որչափ ռուսացն որոյ ոչ միայն հարկաւորութիւն և շինաղութիւն նաւ զլուսաւորել ազգս ևս ի մերումս ժամանակի նախանձաւորս և անդ բիւրազգէ օգտակարութիւն, զորս ազգ մեր ինքնին տեսանէ, զգայ և քաղէ (բնդգծումը իմն է — Ա. Մ.)²:

Այսպիսով, ուսերենի մասին Խ. Աբովյանի արտահայտած մտքերը ևս սերտորեն շաղկապվում են նրա առաջադիմական լեզվագիտական հայացքների հետ ու բխում նրանց ոգուց:

Ամփոփենք. ա) լեզվի հարցը Խ. Աբովյանի գործունեության մեջ գրավել է չափազանց կարևոր ու էական տեղ և նրա վերաբերյալ հեղինակը իսկապես մշակել է առաջադիմական ու արժեքավոր հայացքներ. բ) Խ. Աբովյանի լեզվագիտական հայացքները կազմում են անցյալ դարի 30—40-ական թվականներին հայ հասարակական կյանքում կատարված տեղաշարժերի յուրատեսակ մի արտահայտությունը և օրինաչափորեն պայմանավորվում են հին, մեռած լեզուն ասպարեզից դուրս մղելու և գրականության մեջ կենդանի լեզվի դիրքերը ամրապնդելու անխուսափելի իրողությամբ. գ) իրենց բովանդակությամբ և էությամբ Խ. Աբովյանի լեզվագիտական հայացքները մի նոր լարձր աստիճան են հայ լեզվաբանական մտքի զարգացման տեսակետից և ներկայացնում են առաջընթաց քայլ՝ հայ մատենավարության լեզվաբանությունն ստեղծելու ճանապարհին, և վերջապես դ) իբրև այդպիսին, նույն այդ հայացքները կազմում են գրաբարի դեմ և աշխարհաբարի օգտին ծնունդ առած գիտակցական այն պայքարի տեսական ելակետը, որի հիմնադիրը հենց ինքը՝ Խ. Աբովյանն է:

¹ Խ. Շահագիր, Դիվան Խ. Աբովյանի, 1940, հատ. 1, էջ 158:

² Խ. Աբովյան, Նոր տեսական և գործնական քերականություն...